

Հաստատում եմ՝

Վահագնի Հ. Թումանյանի

սեփական տեղագրական համալսարանի

ռեկտոր, սեփական գ. ղ. պրոֆ.

Ռ. Սահակյան

31 օգոստոսի, 2022 թ.



ԿԱՐՄԻՔ

Առաջատար կազմակերպության

Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի՝ «Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզու» առենախոսության վերաբերյալ՝ ներկայացված բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի նիստում (31.08.2022թ., արձ. թիվ 1)՝ բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հ. Բաբուռյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Խաչատրյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Թ. Շահվերդյանը, դոցենտներ Ա. Սանթրյանը, Ա. Պողոսյանը, Ս. Թումանյանը, Դ. Գյուլգաստյանը, Հ. Հարությունյանը, Վ. Փիլոյանը, Ա. Սարուխանյանը, Գ. Հովիվյանը, Գ. Պապյանը, Տ. Դանիելյանը, Ա. Եղոյանը, Լ. Պետրոսյանը, Շ. Ղուկասյանը, Ն. Անտոնյանը, Բ. Ղազարյանը, Հ. Մելքոնյանը:

Ելույթ ունեցան բ.գ.թ., դոցենտ Շ. Ղուկասյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Պետրոսյանը: Ելույթներին արձագանքեցին բ.գ.դ., պրոֆեսոր Թ. Շահվերդյանը, բ.գ.թ., դոցենտներ Ա. Սանթրյանը, Հ. Հարությունյանը, Հ. Մելքոնյանը, Ն. Անտոնյանը:

Հայերենագիտության մեջ լեզվաբանական ուսումնասիրություններն ավանդաբար վերլուծության են ենթարկում հին հայերենի գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական աշխարհը, քանի որ այստեղ բառերի ուղղակի և փոխաբերական կիրառությունները բացահայտում են ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունները:

Այս առումով հետաքրքրական են գրական հայերենի տարբեր շրջաններում հին հայերենով շարադրված «Պատմութիւն Հայոց» երկերը՝ որպէս և՛ գեղարվեստական, և՛ իրապատում ստեղծագործություններ, որոնք, ընդգրկելով լեզվական տարբեր ոճերին պատկանող խոսքային իրավիճակներ, առանձնանում են մի շարք յուրանահատկություններով:

Լիլիթ Հակոբյանը այդ երկերից քննել և մեկնաբանել է 13-րդ դ. հեղինակ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկը, որում գիտական հետաքրքրություն է առաջ բերում հատկապէս հիշյալ ժամանակաշրջանը ներկայացնող բառաշերտը՝ գրաբարյան բառերով ու փոխառություններով: Ատենախոսության մեջ լեզվական փաստերի զուգադրության եղանակով ուսումնասիրվել են մասնավորապէս մոնղոլական փոխառությունները, ինչով աշխատանքում կարևորվում է միջլեզվական ուսումնասիրությունը, որն ունի նաև միջմշակութային իրողությունների բացահայտման նպատակ:

Ատենախոսությունը բաղկացած է չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված տեսական գրականության, սկզբնաղբյուրների և բնագրերի ցանկերից:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակն անդրադարձել է Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզվի ընդհանրական բնութագրին, մասնավորապէս բառապաշարային և քերականական իրողություններին:

Աշխատանքում ատենախոսը քննում է Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի գոյականների հոլովական համակարգի պատմական զարգացման հարցեր՝ քննելով բնագրային նյութերը և դրանց մասին եղած դիտարկումները:

«Պատմութիւն Հայոց» երկի շարահյուսական առանձնահատկությունները» գլխի առաջին ենթամասում ներկայացված են նախադասությունների և դրանց անդամների կապակցությունները, որոնցում հիմնական ուշադրության են արժանացել միայն համաձայնությունը և շարադասությունը: Երկրորդ մասում դիտարկված են անդամ նախադասությունները և նրանց տեսակները:

Աշխատանքն ավարտվում է Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի պատկերավորման-արտահայտչական համակարգի բացահայտմամբ, որով հեղինակը ներկայացրել է պատկերավորման և արտահայտչական միջոցները, որոնց կիրառական առանձնահատկություններով էլ առանձնանում է հեղինակի լեզուն:

Ատենախոսությունը եզրափակվում է քննությունից բխող եզրակացություններով, որոնք ամբողջացնում են հեղինակի ասելիքը և դառնում ուսումնասիրության տրամաբանական ամփոփումը:

Արժևորելով կատարված աշխատանքը՝ չենք կարող չնշել որոշ հիմնական թերություններ և վրիպումներ.

1. Գանձակեցու կենսագրությանն առնչվող հատվածում *Գանձակեցի* մականունը քննելիս ատենախոսը վկայակոչում է Վ. Առաքելյանին, սակայն տեղին կլիներ անդրադառնալ Կ. Մելիք-Օհանջանյանին ևս, քանի որ վերջինս Գանձակեցու պատմության առաջաբանում այդ հարցին նվիրված շատ ընդարձակ վերլուծություն ունի, որ արվել է Առաքելյանի ուսումնասիրությունից (1972թ.) ավելի վաղ՝ 1957թ.:
2. Էջ 36-ում մոնղոլական փոխառությունների մասին խոսելիս հիշատակվում է *խադան/խաքան* բառը: Ատենախոսն այն նշում է որպես միջինհայերենյան բառ, բայց պետք է նկատի ունենալ, որ *խաքան* տարբերակը ՆՀԲ-ում հիշատակվում է Խորենացու երկով, ուստի և բառը պետք է նշվեր գրաբարյան փոխառությունների շարքում կամ գոնե ծանոթագրվեր: Արմատական բառարանում նույնպես վկայվում են Խորենացին և Սեբեոսը:
3. Հոմանիշներին նվիրված հատվածում, կարծում ենք, տեղին կլիներ խոսել դարձվածքային հոմանիշ միավորների մասին: Այսպես՝ Գանձակեցին «վախճանվել» իմաստով գործածել է բազմաթիվ հոմանիշ դարձվածքներ, ինչպես *մինչև ցկատարումն* (էջ 6), *հանգաւ ի Քրիստոս* (էջեր 13, 81), *փոխեցաւ առ Քրիստոս* (էջ 15), *փոխեցաւ ի Քրիստոս* (էջ 81), *փոխի ի կարգս հրեշտակաց* (էջ 34), *կատարեցաւ ի Քրիստոս* (էջեր 41, 81), *ելից զկենցաղս* կամ *ել ի կենցաղոյս* (էջ 94): «Սպանել» իմաստով գործածում է *ելոյծ ի կենցաղոյս* (էջ 94) դարձվածքը:
4. Ատենախոսը «Համանուններ» ենթազխում անդրադառնում է նաև *Տէր* բառի «Աստված» և « իշխան» իմաստներին՝ դրանք դիտելով առանձին բառույթներ, սակայն բառարաններում դրանք ոչ թե առանձին բառույթներ են, այլ նույն բառի տարբեր իմաստներ:
5. Բառակազմական օրինաչափությունները քննելիս պետք էր անդրադառնալ ոչ թե հայոց լեզվի վաղ շրջաններից ավանդված բառերի կազմությանը, որոնք ոչ մի կերպ չեն բնութագրում ո՛չ Գանձակեցու լեզվամտածողությունը և ո՛չ էլ տվյալ


ժամանակաշրջանը, այլ անընդունակ միայն միջիննայերեկյան բառաչերտին և այն բառերին, որոնք բառարաններում կա՛մ վկայված չեն, կա՛մ էլ միայն Գանձակեցու վկայությամբ են:

6. *Տարեալ նստուցին* գուգարացի համար առենախոսը եչում է, որ բաղադրիչները սարքեր սեռերի են (էջ 54), սակայն իրականում երկուսն էլ ներգործական սեռի բայեր են «... տարեալ նստուցին զնա յաբոռն Պետրոսի առաքելոյն» (էջ 17): *Ներգործական* և չեզոք բայերից կազմված չէ նաև *ջարդեալ մեռաւ* գույզը. *ջարդեալը* սովալ դեպքում եշանակում է «ջարդվելով» և ոչ թե «ջարդելով»:
7. *Աղքատասեր* բարդության բաղադրիչների միջև առկա է խնդրային (ուղիղ խնդիր-լրացալ), ոչ թե պարագայական հարաբերություն (էջ 55):
8. Առենախոսությունը էապես կշահեր, եթե քննարկվեին այն բառերը, որոնք բառարաններում կա՛մ միայն Գանձակեցու վկայությամբ են, ինչպես՝ *յոզնադրուստ* (էջ 6), *օգտեցուցանել* (էջ 218), *ուշաբարձ* (էջ 296), կա՛մ ՆՀԲ-ում վկայված չեն ընդհանրապես, ինչպես՝ *զգուշակենցաղ* (էջ 295), *դժոխատես* (էջ 271), *երեքխորանք* (էջ 223), *քանդակակերպ* (էջ 215), *խնդատես* (էջ 215), *ջրաւետ* (էջ 211), *փայտաւետ* (էջ 211), *հայայեզու* (էջ 192), *զրուցատրաբար* (էջ 192), աղօթկոչող (էջ 185), *կարգընկեց* (էջ 181), *եկեղեցաձեւ* (էջ 170), *ատակնաբար* (էջ 116), *բարեյարմարութիւն* (էջ 106), *քաղցրավարութիւն* (էջ 105), *յոզնադրուստ* (էջ 6): Հնարավոր է, որ այս բառերի մի մասը (եթե ոչ բոլորը) Գանձակեցու նորակազմությունները լինեն:
9. Նույն նշանակյալի համադրական և հարադրական ձևերը պետք է համարել ոչ թե հոմանշային գույզեր, այլ բառատարբերակներ, ինչպես՝ *երկիր պագանել – երկրպագել*, *աշխարհն Աղուանից – Աղուանք* և այլն:
10. Աշխատանքում «բրինձ» բառը՝ «իշխան» իմաստով, համարվել է արևմտահայերեն տարբերակ այն դեպքում, երբ *արևմտահայերեն* և *արևելահայերեն* եզրույթները շրջանառվել են նոր գրական հայերենի առնչությամբ:
11. *Ողողանիլ* և *սրբիլ* բայերը համարվել են կրավորական սեռի և բերվել բնագրից քաղված օրինակներով, սակայն դրանցում բացակայում են ասվածը հիմնավորող և կրավորական սեռի բայերին հատուկ սեռի խնդիրները:
12. Աշխատանքում տեղ են գտել նաև որոշ լեզվաոճական, կետադրական և տեխնիկական բնույթի վրիպումներ:

Անփոփելով վերոնշյալ կարծում ենք, որ առենախոսը, հրապարակային պաշտպանության ներկայացնելով արդիական ենչարություն և զիտական հետաքրքրություն ներկայացնող բնագի համակարգմանի վերլուծություն, այնուամենայնիվ չի կարողացել լուծել իր առջև դրված խնդիրները:

Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի՝ «Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզու» բնագյով առենախոսությունը չի բավարարում թեկնածուական առենախոսությանն առաջադրվող պահանջները: Առենախոսը կարող է հավակնել իր հաջցած զիտական աստիճանին դիտարկումները հաշվի առնելուց և անհրաժեշտ շեկումներ կատարելուց հետո:

Բվերակություն՝ կողմ - 1, դեմ - 1, ձեռնպահ - 17:

ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության
ամբիոնի վարիչ՝  Բ.Գ.Թ., դոցենտ Ն. Բարություն

Ն. Բարությանի ստորագրությունը վավերացնում եմ՝
ՎՊՀ-ի գիտքարտուղար՝  Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Բեժանյան



31.08.2022թ.